ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/90

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2020թ. թիվ 26/26-1/5851-2020 գրությամբ «Արավ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 14.04.2020թ. թիվ 01/61-6477 գրության հիման վրա, 21.04.2020թ. թիվ 26/26-1/5851-2020 գրությամբ նախաձեռնել է «Արավ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արավ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արավ» ՍՊԸ-ն 05.05.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/120» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող:

Ընկերությունը հայտնել է, որ 01.04.2020թ. գրությամբ դիմել է Ընթացակարգի համակարգող Գ.Մուրադյանին և խնդրել «Արավ» ՍՊԸ-ի հաղթած չափաբաժինները շնորհել մյուս մասնակիցներին և Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ 26.03.2020թ. դրությամբ «Արավ» ՍՊԸ-ն ունեցել է չկատարված հարկային պարտավորություն 10223 ՀՀ դրամի չափով, որից ապառք՝ 10178 ՀՀ դրամ, տույժ՝ 45 ՀՀ դրամ:

Ամփոփելով վերոգրյալը՝ խնդրել է Ընկերությունը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/90 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.04.2020թ. թիվ 01/61-6477 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/120» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Արավ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և Պատվիրատուի կողմից օրենքով սահմանված կարգով հայտարարվել է անգործություն:

Ընկերության տնօրենի կողմից 01.04.2020թ. թիվ 1 գրության համաձայն՝ վերջինս փաստացի հրաժարվել է պայմանագիր կնքելուց՝ պատճառաբանելով հարկային

պարտավորությունների առկայության հանգամանքը և խնդրել ընկերության հաղթած չափաբաժինները շնորհել մյուս մասնակիցներին:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համապատասխան որոշմամբ դադարեցվել է Ընկերության հետագա մասնակցությունը գնման գործընթացին և 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/90 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/90 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/90 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար Երևանի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման համար սարքավորումների ձեռքբերման և տեղադրման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/120» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արավ» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արավ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ընդունվել է ի գիտություն այն հանգամանքը, որ 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակցի՝ Ընկերության տնօրենի կողմից 01.04.2020թ. թիվ 1 գրությամբ, վերջինս փաստացի հրաժարվել է պայմանագիր կնքելուց՝ հարկային պարտավորություններ ունենալու հիմքով և խնդրել Ընկերության հաղթած չափաբաժինները շնորհել մյուս մասնակիցներին:

4. Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2020թ. թիվ 26/26-1/5851-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 14.04.2020թ. թիվ 01/61-6477 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Արավ» ՍՊԸ-ի 05.05.2020թ. գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով

հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսին:

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար Երևանի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման համար սարքավորումների ձեռքբերման և տեղադրման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/120» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արավ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արավ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ընդունվել է ի գիտություն այն հանգամանքը, որ 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակցի՝ Ընկերության տնօրենի կողմից 01.04.2020թ. թիվ 1 գրությամբ, վերջինս փաստացի հրաժարվել է պայմանագիր կնքելուց՝ հարկային պարտավորություններ ունենալու հիմքով և խնդրել Ընկերության հաղթած չափաբաժինները շնորհել մյուս մասնակիցներին:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշում է կայացրել 1-ին և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, ինչպես 01.04.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ, այնպես էլ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 05.05.2020թ. ուղղված գրությամբ հայտնել է, որ պայմանավորված 26.03.2020թ. դրությամբ ունեցած չկատարված հարկային պարտավորությամբ՝ խնդրել է «Արավ» ՍՊԸ-ի հաղթած չափաբաժինները շնորհել մյուս մասնակիցներին:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Արավ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/120» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը, որպես ընտրված մասնակից, փաստացի հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.04.2020թ. թիվ 26/26-1/5851-2020 գրությամբ «Արավ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արավ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**